

Ակ ծագմած կիսումայինը Մենք զանեմք եւրոպական խաղկրած փոխարկերով օրինակեցինք»։ Այսպիսի ատոռն անկարող կ'ըլլան փափագուած օգուտն ընծայելու, անոր համար յուս սախար՝ « Ի զոր չանացինք, կ'ըսէ, անիի պայծառ և ստոյց տեղեկութեամ մ' անոնց անեց վրայ. բանձերը յնակցանք... որովհետ այս հշամերն մերինեներուն եւս թառ ենակորին չունինք և չեն ենամանինք այդիայը հեշտիներ, այդ հայնի եկեղեց, բարձրութեան աստիճան ու հակիստեն ։ »

Այս ամէնց, ուրեմն, մէկ քանի նորութիւններ աւելցնելու միայն կը ծառայէ իր ունեցած տեղեկութեանց վրայ, որոնց կերպով մը կը կազմեն նախադրունք անոր համեմատական ուսումնասիրութեանց, գարծունէութիւն մը՝ որ Այնապատի կիւրեղեան Աքրանօր ճակտին կը հիւսէ փառաւոր պասկ մը։

Հ. Դ. ՏԱԹԵԱՆ

(Ծարութակելի)



## ԱՅԻՆԻԱՅԻՔ

### ԹՈՆԻՐԻՆ ՊԱՌԱՒԾ

[Խոմ «ՏԱՐՈՒԱԿՈՒՆՁ» անոնիպ գործին]

▽

« Դէմ, իմ պառաւ մայր Հայաստան,  
գուէ անոյ ու անորոք,  
Այսպէս յաւեր քեզ կը կարգան  
Առ և աղինք օ՛ր, օ՛ր, օ՛ր...»։  
ԳԱՎԱՐ - ՔԱՐԴԻԳԱ

Իջեր էինք խոհանոց-Ճաշարանը Առաքելց վանրի։

Ընթրիքի պահն էր ։ Չո՞ն էին որքերը, խումբ-խումբ սեղանի նստեր։ Փայտեայ փոքրիկ դպաւներ ազահարար կը միրճուին գոզաւոր ամաններուն մէջ՝ որ թանապուրն է լցուեր։ Դպաւով մը ես ալ կը համտեսեմ անկէ։ Բոլոր պատիկ աշքերը հարցական հետաքրքրութեամբ կթած կը թանի իմ վրայ։ Խոյս կու տամ այդ ասղնատող ու սրտաճմիկ նայուածքներէն։

« Միշտ այս է մեր կերածը », — սիրո կ'ընէ շնչելու արթուն տղեկ մը, երբ շուր զալով խոհանոցի կիսասուուերին մէջ՝ ջէն՝ կ'անցնէի անոր մօտէն։ Զգսպուած այլ պատկառուկ այս զանգատը, ովք զիտէ որպիսի յոյսերով թէ առած, աւելի քան ցնցող էր։ Ի՞նչ պատասխանել, երբ ոչինչ կարելի էր ընել՝ գոհացնելու համար գունատ փոքրիկներու դատարկ որկորները։

« Այդպէս, համ. ես կը խօսիմ հայր սուբրին. նա մեզ ոչինչ կը խնայէ՝ եթէ ունենայ », — կ'ըլլայ ակամայօրէն խուսափողական իմ պատասխանը։

Մատակարար կիները կ'ըսես իրենց ալ են գդգոն։ Երթներէ շրթունք կ'անցնի մրթմրթոց մը՝ որ բնորոշ է, մանաւանդ պառաւներու մօտ։ Աւելի յարմար միջոց մը չունին անոնք՝ գրաւելու նորեկ այցելուի մը ուշագրութիւնը։

Այս մրթմրթոցին որպէս թէ չեմ ըլլար ականջաղորուկ և կը շարունակեմ ման զալ տղոց մէջ, խուզարկու ակնարկներ նետելով կուշտ ու բոլոր։

\* \*

Խոհանոցին ճիշտ մէջտեղ կայ նահապետական թոնիրը՝ որու վրայ կ'աշըէ, առիցէն, նոյնքան նահապետական երդիրը։ Այս վերջինը միակ բացուածքն է, որ միափեղ զրան հետ՝ թոյլ կու տայ մուտքը տկար մինչաղի մը։

Թոնիրն ու երդիրը...

Թոնիրը սիրուն է հրւզակին։ Առանց անոր անհնար է կեանց գեղջուկին։ Լուլիկն ու գոլ օրննութիւններն են անոր։ Ներշընչարանն է այն տատին ու մամին՝ որ ասուկիսներ ունին իրենց թոռններուն։ Արրան անկից կ'առնէ իր թեև հրեշտակի, ինչպէս նանէն իր օրօններ ցնցակ։ Պատանիներ, պարմանիներ՝ կողք կողքի ընկած անոր շրթունքին՝ կը հրւսեն իրենց անուշներ եթերային։ Դրախտի պարն է կը բուրուի անոր շուրջ։

Երդիրն ալ աշըն է հրւզակին։ Աշըն է նաեւ կստծուն։ Շողըն արևուն այդ

Աստծուն՝ անկից կու տայ թոնիր—սրտին  
քարախում:

Թոնիր, երդիք, — սիրո ու աչիկ, —  
ասոնցմով է կռեն կոփեն մեր աստուած-  
ներ՝ Հայաստաննեայց մշակ-բանւոր գեղ-  
ջուկ մարդիկ:

Առաքելոց ի՞նք ալ ունի իր թոնիր, որ  
կը քաշիէ օրհնութիւններ որբերուն և ...  
պառացած այրիներուն:

Առաքելոց ի՞նք ալ ունի իր երդիք, որ  
կը հակէ անոնց վրայ մշտարթուն:

Եւ երդիքէն շողք մ'է ընկեր վերջա-  
լոյափ. շողք մ'է ընկեր թոնիրին վրայ՝  
ուր մաղմաղն է անթեղուեր:

\*

Այնտեղ, թոնիրի շրթունքին, գունտ ու  
կծիկ առարկայ մը կայ զիտեղուած, ա-  
ղեղնածն ու անշարժ: Կ'ըսեն, սիրո, աչը  
մէկ եղած՝ կը գուրգուրան անոր վրայ:

«Ի՞նչ է այս», — կը հարցնեմ պաս-  
ուաներուն հետաքրքրութեամբ: Եւ ահա  
առարկան կը խլափի, ուրուային զլուկի մը  
դուրս կու զայ շորերու տակէն և նայուած-  
քով մը, ուր անդենականի ստուերը կը  
կը վարագուրուի, կը զառնայ ինծի:

«Ո՛վ է այս», — կ'ուղեմ խօսց  
այս անգամ, — «Ի՞նչն է պառկեր այս-  
տեղ»:

«Ի՞նչ ունիս, նանէն», — կը հարցը-  
նեմ ապա պառկողին:

Խօսցը մնորոշ ձայն մ'է այլ ես ներա  
լեզուի վրայ, տարտամ պատկերներէ թե-  
լադուած:

«Վանքի հին վաստակաւոր է: Հարիւր  
տարեկան է: Անդամալոյծ է: Թոնրէն  
չի քամնուիր: Կը զնուուայ», — վրայ բե-  
րաւ կիներէն մէկը՝ որու բերնէն նոյնպէս  
հոտ կու զար մեռելի:

Փորբրիկներու, որ կը շարունակն իրենց  
զգաներու տենդոս մկրտութիւնները, կը  
տեսնեն մոլորուն նայուածքը պատաին և  
կ'ունենան իրենց անմեղունակ ծիծաղը:

Փորբրիկներու, կանաչարն կայծ ու կը-  
րակ հոգիներու այդ ծիծաղը...: Ծիծաղը  
սա պլալուն ու անժաիտ կոնդին դէմ՝ որ

երբեմն ի՞նցն ալ է ունեցեր այդ կանաչ  
ու արև, այդ կայծ ու կրակ և գուցէ նաև  
այդ ծիծաղը: Ո՛վ կարող էր չզգալ սար-  
սուան այդ ծիծաղին:

Պառաւն ի՞նցն ալ մի՞թէ չզգաց, երբ  
ողորմուկ ձայնով բաներ մ'ըսել ուզեց  
լնձ:

Ի՞նչ ըսել ուզեց: —

Է՛յ, ես պատմեմ քեզ, ի՞նչ որ ըստ նէ  
կամ ըսել ուզեց: —

\*

«Ա՛յ», ի՞նչո՞ւ կը ծիծաղին այդ լա-  
ներ:

«Ես ոգին եմ թոնիրին: Այսա՛ կը հան-  
գի ճրագս, արծարծեցէ՛ց զիմ ճրագ: Յուրա-  
է շունչը ծիծաղին: Նա կը փշէ զիմ ճը-  
րագ: Տուէ՛ց ինձ ձեր սիրոյ տաբ շունչ.  
ան հոգեգարձ կ'անէ զիմ ճրագ: Դին,  
մտիկ առէքը, — հայհայս է գնացեր, վայ-  
վայս է մնացեր. շողք էլի, ստուեր եմ դար-  
ձեր: Ծիծաղը կը խամրէ զիս: զգո՞յշ:

«Ես ոգին եմ թոնիրին: Զեմ հեռանար  
ես իմ խորու թոնիրէն: Զերմիկ թոնրիկ,  
ձեզ տաց լոլիկ: Է՛յ ջան որդիք, շատ եմ  
խառներ իմ անթրոցով ես այդ թոնիր,  
շատ եմ թիսեր լոց ես էնոր կողին իմ փա-  
թաթով ձեզ նման դմրոմիկ երեխաներու  
համար:

«Ես ոգին եմ թոնիրին: Լեանց եմ  
բաշխեր ես այդ թոնրին: Երթներս էնոր  
շրթներուն՝ տաք շունչ եմ տուեր ես այդ  
թոնրին: Բոցը կոճղին չէք տեսեր. բոցը  
կոճղին հնամի՛ որ տապարն է տապալեր:  
Այդ բոց՝ լեզուն է այն ոգուն, որ ես եմ.

«Թոնիրը սիրու, ես էնոր ոգին...: Եւ  
ահա եկեր են իմ թեներ. պիտի թոչչմ:  
Բայց կը թոնէն ոգին զիւր սիրու:

Այս թոնիրը, օ՛. շատեր է տեսեր ինձ  
նման. շատ ծիծաղներ լսեր ձերինի նման:  
Մի օր էլ, հէյ, կը տեսնէ ձեզ ինձ նման,  
կը լսէ ծիծաղը ուրիշներու՝ ձեզ նման:  
Այդ ծիծաղ ձեզ էլ, ձեզ էլ կը թոշնեցնէ:

«Բերնէս դուրս զայ՝ քամին տանի, թէ  
ես, սակայն, ձեզ կ'անիծիմ, իմ որդիք:  
«Թոնիր ոգին չանիծեր ձեզ:

«Ես կ'առնեմ թե, կը թռչիմ վեր, երդիքէն դուրս կը թռչիմ: Այն երդիքէն կ'աշեմ, այս, իմ յաջորդներ՝ ձե՛զ, միամիտ ճիթ ու պիծ...»:

«Ես ոգին եմ ինամակալ Անահտի: Թունին ի՞նց է խնամատար՝ հիւղակին: Ասկիամօր ուկի-պատներ այդ թոնրի մէջ չեն անթեղուեր: Ուկի-կայծառն ունիմ ես կենսապարզ այդ թոնրին. ուկի-կայծառը, ձուլուած՝ ուկիէն ծիրինկատարի:»

«Ես ոգին եմ Տարօնի, Անահտական աշխարհի, վառուած լոյսով Պարթիկ, լցուած՝ զիլուուն, բոց - շունչով Մամիկոնեան մեծ տոնմին: Անոյշն եմ ես Սահակին, վարդ-շուշանն եմ Վարդանին:»

«Ողին եմ ես պառաւացած մայր Հայաստանին:»

«Հայրէնիք ոգին եմ ես հայ Յեղի:»

«Ես մի զաղտնիք ասեմ ձեզ. — Ափստմէ բերեր զիս այստեղ...»

«Առացելոց ոգին եմ ես:»

«Ողին եմ ես Խաչվէմբուն...»

«Ես էլ կոյս էի ակն ու արեգակ. իմ վրայէն էլ կը թափէր կրակ: Օր մ'էլ եղայ մայր... Սև եղաւ իմ բախտ: Ապա ուխտ մը զիս բերաւ այս սե-բար. բերաւ զիս որպէս այրի սեաւոր:»

«Կը ծիծաղիք զուբ այդ ոգու վրայ...»

«Տիսէք, ի՞նչպէս լոյս մ'է ընկեր իմ զվիխն՝ այն երդիքէն շողակաթ. շող մ'է ընկեր, հէյ, ալէկոծ իմ ծովի վրայ փըրփրակալած, իմ սարի վրայ մինատարած...»

«Ես ոգին եմ Մասիսի:»

«Պառաւեր եմ ես որպէս մայր Հայաստան:»

«Պառաւեր եմ, բայց չեմ ընկեր. մի ծիծաղիք զուբ իմ վրայ:»

«Անոյշ, անդորր ես չեմ ընկեր. մի ծիծաղիք զուբ իմ վրայ:»

«Ոզզ և ազլին չեն կարդար ինձ օ՛ր, օ՛ր, օ՛ր, յափտեան:»

«Անցուն եմ ես, արթուն եմ ես. մի ծիծաղիք զուբ իմ վրայ:»

«Ա՛խ, իմ որդիք, ես չեմ ընկեր:»

«Չեմ ընկեր ես. բայց կը գնամ, ուր

կը գնայ արար-աշխարհն: Խակ Թռնիքն հոս է, տեսէք, Տիրինկատարն էլ հոն է: Տարօնի շոնչ կը բաշէք, Հայաստանի օղ կը շնչէք:»

«Պառաւացած՝ ես կը գնամ. բայց իմ ոգին՝ անթառամ՝ կը հակէ հոս մշտարթուն:»

«Մի՞ ծիծաղիք զուբ իմ վրայ:»

«Խորհուրդ մ'էլ ես կ'ասեմ ձեզ. —

«Մա՞կ տուէք. —

«Իմ ոգին զուբ էք, իմ ճիծեր... մի ծիծաղիք զուբ ձեր վրայ....»:

\*

Պառաւը կրկին կծկուեցաւ իր շորերու տակ և մատ լուս ու անժամ:»

Ցայյը նոյնպէս նստեր էին ծալապատիկ, անխօսիկ: Պարպուեր էին թանապուրի պնակներ:

Լուս էր ու մտախոհ եւ այս տողեր գրով:

Եւ այս լուսիթեան մէջ կը կարծէի լուսել մայր-Հայաստանի այս խորհրդաշունչ խօսքերը, Առացելոց մենատանի թռնիքի պառաւի երթացած շրմներով:

Պառաւ է նա, բայց անթառամ. մի ծիծաղիք զուբ անոր վրայ....»

ԳԱՐԵԳԻՆ ՎԱՐԴԱՐԵՏ

15 Հ-ր. 1920

## ՀԱՆԴԻՍՆԵՐԻ Ի ՎԵՆԵՏԻԿ

Մարզանեգէս. — Թատրիքամատական ներկայաւում. — Հաղորդութեան Գաւառաւուողով ի Վանեսիք:

Անը տարի ևս Մ.-Ռ. Վարժարանիք սաները տարեկան ֆնութեանց շարքին՝ հանրութեան ներկայացնուուին իրենց ստացած ֆիզիքական դաստիարակութեան արդիւնքը:

Տնիդ ունեցաւ Յունիս 17ին երեկոյեան մօտ ժամ 6ին՝ վարժարանին պարտէին մէջ՝ ի ներկայութեան պաշտօնական անձնաւորութեանց, Հայ ընտանիքներու, ուսուցիչներու, դպրոցական հաստատութեանց եւ խուռն բազմութեան մը: Մարզիկները ուսուցիչ Մարիոյ Կալոյի հրամա-